ՀՀ Ազգային Ժողովի
արտահերթ ընտրություններ

2018

դեկտեմբերի 9

3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

9 Դեկտեմբեր 2018

ՔՎԵԱԹԵՐԹԻԿ

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒՍՏԱՄՅԱՆ ԱՐՄԵՆ ԵՋՆԱԿԻ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ ԱՐՍԵՆ ԽԱՉԻԿԻ
ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ ԼԵՎՈՆԻ

Հայ Յեղափոխական Դաշնակցությունը

որպես ազգային, ժողովրդավար, սոցիալիստական և հեղափոխական կուսակցություն, մշտապես պայքարել է հայ մարդու և հայության քաղաքական, տնտեսական, սոցիալ-մշակութային շահերի համար:

Հ.Յ. Դաշնակցությունը համահայկական ուժ է, ունի ապագայի իր տեսլականը, ունի հստակ՝ մեր ժողովրդի էությունից բխող արժեքային համակարգ, ունի իր նպատակներն իրականացնելու կազմակերպական կառույց ու վերահսկման մեխանիզմ:

ՀՅ Դաշնակցության համար բարձրագույն արժեք են մարդը, նրա արժանապատվությունն ու իրավունքները: Կարևոր է, որ Հայաստանի քաղաքացին հավատա իր պետությանը, իր և իր ընտանիքի վաղվա օրվան, մասնակից դառնա այդ ապագայի կերտմանը: Հարկ է թռիչքաձև, կայուն զարգացման նախադրյալներ ստեղծել, թարմ շունչ հաղորդել հասարակական կյանքի բոլոր ոլորտներին:

Հ.Յ.Դ. նախընտրական ծրագիրը խարսխված է բարոյականության և արդարության չափանիշների վրա: Այն ուղղված է ապագային, իսկ մեր հայացքը՝ երիտասարդներին:

Մեր նպատակն է կառուցել Ազատ քաղաքացիների Հզոր և Արդար երկիր:

Ապրիլին սկսված ժողովրդական շարժումը փակեց անցյալի էջը: Այսօր մենք կանգնած ենք վաղվա հայրենիքը կերտելու հրամայականի առաջ: Այս ընտրություններով է որոշվելու, թե ուր ուղղությամբ է զարգանալու Հայաստանը: Արդյո՞ք մենք կունենանք ազատ քաղաքացի, համերաշխ հասարակություն և անկախ պետություն, թե՞ Հայաստանը կգահավիժի անորոշության ու անկառավարելիության հորձանուտը, խոցելի կդառնա արտաքին հարվածների ու տարաբնույթ ապազգային ուժերի սադրանքների նկատմամբ, կշարունակվեն հասարակության բևեռացումն ու արտագաղթը: Սկսածն անշրջելի դարձնելու, խորացնելու և ավարտին հասցնելու առաքելություն ունի Դաշնակցությունը:

Դաշնակցությունը հանդես է գալիս ազգային արժեքների պահպանման, առանց զիջումների զարգացման և սոցիալական արդարության դիրքերից:

Տնտեսական քաղաքականության մեր առաջնահերթություններն են.

- **առաջանցիկ տնտեսական աճը,**
- **սոցիալական ներառականություն և արդարությունը,**
- **կայուն զարգացումը:**

Տնտեսությունը պետք է զարգանա ոչ թե շուկայական տարերային մոտեցմամբ, այլ՝ պետական անհրաժեշտ կարգավորման զուգորդմամբ ճգտի տնտեսության առավելագույն ներուժի իրացմանը: Պետությունը չպետք է հանդես գա դիտորդի կարգավիճակում՝ տնտեսության կարգավորումը թողնելով «շուկայի անտեսանելի ձեռքին», այլ պետք է արդյունավետ միջամտությամբ վերացնի շուկայական ձախողումները, մենաշնորհների առաջացումը, գերիշխող դիրքի չարաշահումը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ տնտեսության զարգացման լոկոմոտիվի դերը ստանձնի:

Դաշնակցության համար սոցիալական արդարությունը հիմնական օրակարգ է: Ազգային արժեքը ստեղծվում է ամբողջ հասարակության ջանքերով: Բայց արդյո՞ք այդ արժեքն արդար է բաշխվում արժեքը ստեղծողների միջև: Ո՛չ: Սոցիալական բևեռացումը Հայաստանում հասել է ահռելի մակարդակի և շարունակում է խորանալ: Հայաստանի անկախացումից ի վեր իրականացվող տնտեսական ու սոցիալական քաղաքականությունը բերել է հարուստների էլ ավելի հարստացմանը և աղքատների էլ ավելի աղքատացմանը:

Դաշնակցությունը վստահ է, որ պետության քաղաքականությունը պետք է միտված լինի բնական

ռեսուրսների գերշահագործումը բացառելուն, շրջակա միջավայրի, այդ թվում՝ մարդու կյանքի ու առողջության վրա բացասական ազդեցությունը նվազեցնելուն, բնական ռեսուրսների համալիր կառավարմանը և դրանցից ստացվող եկամուտների արդար բաշխմանը հասարակության բոլոր անդամների միջև: Սակայն, կայուն զարգացումը միայն բնապահպանական գործոն չէ: Այն պահանջում է, որ պետության քաղաքականությունն ուղղված լինի նաև գալիք սերունդների բարեկեցության ապահովմանը, ներառյալ՝ կրթությունն ու առողջապահությունը:

Հայաստանի քաղաքացին Դաշնակցությանը տված իր քվեով երաշխավորելու է լայնածավալ այս բարեփոխումներն ու երկրի առաջընթացը:

Միայն այս ճանապարհով է հնարավոր վերացնել ժողովրդի՝ տարիներով կուտակված արդարացի դժգոհության պատճառները, անշրջելի դարձնել երկրի կայուն և առաջանցիկ զարգացումը:

Ահա թե ինչու կարևոր է, որ խորհրդարանում լինեն իրական քաղաքական ուժեր, ազգային-պետական և Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացու շահերով առաջնորդվող քաղաքական գործիչներ:

ՍԻՐԵԼԻ ՀԱՅՐԵՆԱԿԻՑ,

առաջիկա ընտրություններին մասնակցող քաղաքական բոլոր ուժերը քո աչքի առաջ են:

Համեմատի՛ր և կտեսնես՝ Դաշնակցությունը տար բերվում է մյուսներից. մենք մի անձի կուսակցություն չենք, ունենք մեծ փորձառություն, ունենք գաղափարական և ծրագրային սկզբունքներ, որոնց երբեք չենք դավաճանել, հետևողական ենք, չենք եղել ու չենք կարող ամբոխավար լինել՝ այսօր ասել մի բան, վաղը՝ հակառակը: Մենք չենք փոխվել. և՛ ընդդիմություն, և՛ իշխանություն եղած ժամանակ Դաշնակցությունը առաջադրել է միևնույն խընդիրները և լուծումներ գտել:

Մենք սկսել ենք Արցախով: Միասին հաղթել ենք Արցախում: Կարողացել ենք ազգային հուն վերադարձնել երկրի քաղաքական ուղեգիծը: Կարողացել ենք կառավարման համակարգ փոխել:

Որքան ուժեղ լինի Դաշնակցությունը, այնքան մեր երկիրը կայուն, արդար, խաղաղ կլինի: Այնքան բարեփոխումներն արագ, արդյունավետ ու անշրջելի կդառնան՝ հասնելով յուրաքանչյուր ընտանիքին ու քաղաքացուն: Այնքան մեր ազգային-պետական հիմնահարցերի դրական լուծումը երաշխավորված կլինի: Այնքան Հայաստանի ինքնիշխանությունն ամուր կլինի:

Վստահե՛ք Դաշնակցությանը, դեկտեմբերի 9-ին քվեարկե՛ք Դաշնակցության օգտին, և մենք արդար, զարգացող, ուժեղ Հայաստան կունենանք:

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

հավատացած է, որ ազատ մարդ, անկախ և միասնական պետություն և համերաշխ հասարակություն ունենալու մեր բոլորի ցանկությունը միանգամայն իրագործելի է:

Մեր անկախ պետականությունը, ազատագրված Արցախը մեր արժանապատվությունն ու մեր հպարտությունն են: Մենք կարող ենք և պետք է զարգանանք առանց զիջելու: Սա պետք է դառնա համազգային պահանջ, գործողությունների հստակ ու վստահություն ներշնչող ծրագիր և նվիրված աշխատանք:

Սիրելի հայրենակից,

վստահելով Հ.Յ. Դաշնակցությանը՝ դու քվեարկում ես պատասխանատու պետության և համերաշխ հասարակության օգտին:

ԱԶԱՏ ՄԱՐԴ ԵՎ ՀԱՄԵՐԱՇԽ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Մարդը կարող է լինել իրապես ազատ միայն եթե ապահովված է նրա տնտեսական բարեկեցությունը, գործում են սոցիալական երաշխիքներ, որոնք ապահովում են նրա ազատ կամարտահայտությունը և ազատորեն որոշումներ կայացնելու հնարավորությունը: Մինչդեռ, Հայաստանի տնտեսական քաղաքականությունը, անկախության վերականգնումից ի վեր, հիմնված է եղել ինքնակարգավորվող շուկայի նեոլիբերալ գաղափարախոսության և «անցումային տնտեսության» մոտեցման վրա: Պետությունն ուսերից թոթափել է պատասխանատվությունն իր քաղաքացիների նկատմամբ, թողնելով, որ վայրի մրցակցության մեջ հաղթի «ուժեղը»՝ առանց հոգալու «պարտվածների» ճակատագրի մասին: Ցավոք, այս մոտեցումը դեռևս գերիշխում է Հայաստանի քաղաքական էլիտայի գործիքակազմում:

Զարմանալի չէ, որ մեր հայրենակիցները բողոքում են, որ հայտարարվող տնտեսական աճի պայմաններում իրենց կյանքի մակարդակը գնալով անկում է ապրում, քանի որ տնտեսական աճի բարիքներից օգտվում է «հաղթողների» մի փոքրիկ խումբ: Այսպիսով, պետությունն իրեն օտարեց քաղաքացուց, իսկ քաղաքացին օտարվեց պետությունից:

Չզգալով պետության պատասխանատվությունը քաղաքացու հանդեպ, քաղաքացին դադարում է պատասխանատվություն զգալ պետության ու երկրի հանդեպ: Արդյունքը վիթխարի ծավալների հասնող արտագաղթն է, երբ հայ մարդը, չզգալով սեփական հայրենիքի հոգածությունը, իր ապագան փորձում է կապել այլ երկրների հետ: Անհրաժեշտ է արմատապես փոխել երկրի սոցիալ-տնտեսական զարգացման տրամաբանությունը, վերականգնել պետության և քաղաքացու պատասխանատվությունը միմյանց հանդեպ՝ համաձայն Սահմանադրությամբ ամրագրված սոցիալական շուկայական տնտեսակարգի:

Մենք առաջարկում ենք.

- Ապահովել տնտեսական աճի և ստեղծված տնտեսական արդյունքի արդար բաշխումը հասարակության բոլոր անդամների միջև:
- Հնարավորություններ ստեղծել, որ մարդիկ կարողանան իրացնել արժանապատիվ աշխատանք ունենալու իրենց իրավունքը:
- Բացառել, որ օրինիբուն աշխատող մարդը չկարողանա իր ստացած աշխատավարձով հոգալ ընտանիքի նույնիսկ տարրական կարիքները: Երբեմն առաջարկվող վարձատրությունն այնքան ցածր է, որ աշխատունակ և ինքնասիրություն ունեցող մարդը գերադասում է նպաստը, այլ ոչ թե ազնիվ աշխատանքը: Աշխատանքը պետք է ապահովի մարդու արժանապատիվ կյանքը, ոչ թե գոյությունը: Աշխատանքի նվազագույն վարձատրությունը չի կարող ցածր լինել կենսապահովման զամբյուղից: Աշխատող մարդը պետք է կարողանա իրացնել իր հանգստի իրավունքը, կրթության իրավունքը, առողջապահական ծառայություններից օգտվելու իրավունքը, մշակութային և հոգևոր արժեքների հետ հաղորդակցման իրավունքը:
- Ներդնել պրոգրեսիվ հարկային քաղաքականություն, որի հիմքում պետք է դրվի «շատից շատ, քչից քիչ» սկզբունքը: Շատ վաստակողը պետք է ավելի շատ հարկ վճարի, քանի որ դրա միջոցով է հնարավոր վերացնել եկամուտների բևեռացվածությունը և սոցիալական անարդարությունը: Եկամտահարկի դրույքաչափի առաջարկվող

համահարթեցումը՝ անկախ եկամուտի չափից միասնական մեկ դրույքաչափի կիրառումը չի կարող մեղմել սոցիալական անհավասարությունը:

■ Պրոգրեսիվ հարկման տրամաբանությունը պետք է գործի նաև գույքահարկի և հողի հարկի պարագայում: Ունևոր մարդը պատրաստ է ավելի շատ հարկ վճարել, եթե դրան համապատասխան պետությունից ստանա իր սեփականության լիարժեք պաշտպանվածություն, մաքուր շրջակա միջավայր, իր երեխաների համար անվճար և որակյալ կրթություն, առողջապահություն և այլն:

■ Գյուղատնտեսության զարգացումը չառանձնացնել գյուղի զարգացումից: Գյուղատնտեսական աջակցության թիրախը պետք է լինի այն գյուղացին, ով օրնիբուն աշխատում է իր հողի վրա: Աջակցությունը պետք է տրվի ուղղակի գյուղատնտեսությամբ զբաղվողներին, այլ ոչ թե զանազան միջնորդ և մատակարար կառույցներին: Աջակցությունը պետք է լինի թիրախային՝ խրախուսելու առավել բարձրարժեք գյուղատնտեսությունը և նպաստի որ գյուղացիները դուրս գան աղքատության ճիրաններից: Գործուն քայլեր պետք է ձեռնարկվեն կոոպերատիվների ստեղծման, հողերի կամավոր խոշորացման և անմշակ հողերի կրճատման ուղղությամբ: Միաժամանակ, պետական ինչպես նաև պետություն - -համայնք - մասնավոր հատված ֆորմատով պետք է ներդրումներ կատարվեն գյուղատնտեսական ենթակառուցվածքների զարգացման համար:

■ Կանխել կյանքի դժվար պայմաններում հայտնըված մեր հայրենակիցների, որոնք աշխատաշուկայում մրցունակ չեն կամ ինչ-ինչ պատճառներով աշխատանք չունեն, լուսանցք մղվելը: Պետությունն ակտիվ քաղաքականություն պետք է իրականացնի աշխատաշուկա նրանց մուտքն ապահովելու համար և պաշտպանի աշխատողների իրավունքները:

■ Երաշխավորել տարեցների բարեկեցիկ ծերությունը: Անթույլատրելի է, որ ողջ կյանքն արդար քրտինքով իր հացը վաստակած տարեց քաղաքացին հայտնվի աղքատության մեջ:

■ Ստեղծել առողջապահական ապահովագրության այնպիսի համակարգ, որ մեր որևէ հայրենակից զուրկ չլինի բուժում ստանալու հնարավորությունից: Որևէ մեկը չպետք է տառապի կամ մահանա, քանի որ դեղի կամ բժշկի փող չունի:

■ Արտագաղթը կանխելու նպատակով՝ ստեղծել հնարավորություններ, որ հայոց բանակում ծառայած յուրաքանչյուր երիտասարդ կարողանա հոգալ իր բնակարանային ապահովվածության ու աշխատանքի կարիքները:

■ Օգնել հատուկ կարիքներ ունեցող անձանց դառնալու հասարակության լիարժեք անդամներ, ապահովել նրանց կրթություն ստանալու, աշխատելու, տեղաշարժի իրավունքի լիարժեք իրականացումը:

■ Նպաստել երիտասարդ ընտանիքների կայացմանը: Սոցիալ-տնտեսական, բնակարանային, ցածր զբաղվածության և այլ պատճառներով ուշ ամուսնություններն ու ցածր ծնելիությունը երկիրը կանգնեցրել են ժողովրդագրական աղետի եզրին:

■ Վարել ակտիվ հայրենադարձման քաղաքականություն, նպաստել, որ հայրենիքից հեռացած մեր համաքաղաքացիները և սփյուռքահայերը վերադառնան իրենց երկիր՝ քանի դեռ նրանց սերունդները չեն ուծացվել ու չեն դադարել հայ լինելուց: Հայրենիքից հեռացածները և տարիներ ի վեր հայկական Սփյուռքում հանգրվանածները այլ երկրների տնտեսական, գիտական, մշակութային, մարզական էլիտայի մաս են: Հայրենադարձության բարենպաստ պայմաններ ստեղծելով՝ այդ նեռուժն ու կարողությունը կծառայեն մեր բոլորի հայրենիքին:

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԿՏԻՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Պետությունը պետք է կանգնի գործարարի կողքին, աջակցի նրան, ապահովի մրցակցության արդար պայմաններ և գործարարությամբ զբաղվելու հստակ կանոններ: Պետությունը պետք է պատրաստ լինի մասնավորի հետ համագործակցաբար կիսել բիզնես ռիսկը, առաջնորդել այն բնագավառներում, որտեղ այդ ռիսկն ավելի մեծ է կամ որտեղ շահութաբերությունը ավելի ցածր է, կամ մասնավոր ֆինանսավորումը բացակայում է: Նույնիսկ ամենալիբերալ ու պահպանողական քաղաքական ուժերն ամբողջ աշխարհում աջակցում են իրենց երկրների ձեռնարկություններին: Մինչդեռ մենք մեր ձեռնարկություններին թողել ենք միայնակ համաշխարհային մրցակցության մեջ:

Որպեսզի պետությունը կարողանա օգնել իր քաղաքացիներին ու գործարարներին, պետական կառավարման համակարգն էական բարեփոխումների կարիք ունի: Հանրային ծառայությունը (ներառյալ քաղաքացիական ու համայնքային ծառայությունը) պատիվ է, որին պետք է արժանանան միայն բարձր մասնագիտական ու մարդկային որակների տեր անձիք: Պետական բարձրաստիճան պաշտոնյան, ով կոչված է ծառայելու քաղաքացուն, երբեք չպետք է իրավունք ունենա քաղաքացու հետո խոսել վերևից: Յուրաքանչյուր պաշտոնյա պետք է անձնական պատասխանատվություն կրի իր արածի ու չարածի համար և երբեք փորձ չանի իր պաշտոնական դիրքն օգտագործել անձնական շահի նպատակով: Որևէ պարագայում պետք է բացառվի շահերի բախումը: Միայն այս դեպքում հանրային ծառայությունը, որը պետք է արժանապատիվ վարձատրվի, հրապուրիչ կլինի նվիրված ու բանիմաց կադրերի համար: Պետական ապարատի գործառույթները պետք է հստակեցվեն: Նույնիսկ եթե անհրաժեշտ լինի սահմանափակել այդ գործառույթները, կրճատվող հանրային ծառայողները չպետք է փողոցում հայտնվեն:

Մենք առաջարկում ենք.

- Ստեղծել արդար պայմաններ ձեռնարկատիրությամբ զբաղվելու համար: Հայաստանը որքան էլ բարձր տեղեր գրավի միջազգային վարկանիշային ցուցակներում, միևնույն է, դա չի նվազեցնում մեր ձեռնարկատերերի դժգոհությունները տնտեսվարման միջավայրից: Փոքր և միջին ձեռնարկությունները, որոնք ոչ միայն եկամուտ և աշխատանք են ապահովում, այլև հնարավորություն են ստեղծում ինքնադրսևորվելու ու արարելու, հաճախ խոշոր ընկերությունների զոհ են դառնում: Բանկերը, վարկային կազմակերպությունները, տնտեսական առաջընթացն ապահովելու փոխարեն, հաճախ նմանվում են վաշխառուների՝ անհիրատեսական և ստրկացնող վարկավորման պայմաններով:
- Առաջնային համարվող, ռազմավարական և սոցիալական նշանակություն ունեցող ձեռնարկությունների հետ, պետություն-մասնավոր հատված գործընկերության շրջանակներում, կիսել բիզնես ռիսկը և ապահովել մատչելի ֆինանսավորում: Պետությունը պետք է վերանայի տնտեսական հարցերում պասիվ դիտորդի իր կարգավիճակը: Անհրաժեշտ է առավել ակտիվորեն աջակցել այդ ձեռնարկություններին, նրանց հետ ստեղծել համատեղ ընկերություններ, տրամադրել վենչուրային ֆինանսավորում, փոխառություններ և այլ արտոնություններ:
- Աջակցել հայրենական արտադրողին: Մեր շատ ձեռնարկություններ չեն դիմանում արտասահմանյան

արտադրողների ու ներմուծողների հետ մրցակցությանը՝ վերջիններիս կողմից իրականացվող գնագցման ոչ ազնիվ քաղաքականության պատճառով: Հայ գյուղացին չի կարողանում վաճառել իր արդար քրտինքով աճեցրած բերքը, քանի որ ներմուծված ապրանքով ողողված է մեր երկիրը: Պետությունը պետք է մտածի իր արտադրողի մասին: Արտահանման խթանմանը զուգահեռ պետք է ներկրման փոխարինման քաղաքականություն իրականացվի՝ մասնավորապես ագրոպարենային ոլորտում:

- Ուժեղացնել մենաշնորհների և անբարեխիղճ մրցակության դեմ պայքարը՝ խստացնելով մրցակցության համար պատիժների համակարգը և երաշխավորելով ազատ մուտքը շուկա: Մենաշնորհներն ու գերիշխող դիրք ունեցող ընկերությունները պետք է լրացուցիչ հարկվեն: Բնական մենաշնորհ հանդիսացող ընկերությունները ցուցակվեն բորսայում և վերածվեն բաց բաժնետիրական ընկերությունների:
- Թեթևացնել տեսչական բեռը, գիտակցել, որ տեսչական ստուգումները պետք է ուղղված լինեն միայն անբարեխիղճ տնտեսվարողների դեմ և չպետք է մահակ դառնան բարեխիղճ ձեռնարկությունների գլխին:
- Կրթական պետական պատվեր ձևավորելիս առաջնորդվել տնտեսության արդի և հեռանկարային կարիքներով: Բիզնեսը, գիտական ու կրթական համակարգերը պետք է սերտորեն համագործակցեն:
- Վերանայել բնական մենաշնորհների կողմից տրամադրվող ծառայությունների գները: Այժմ կիրառվող գներն իրատեսական ու մատչելի չեն շատ ձեռնարկատերերի համար, փոխարենը՝ բնական մոնոպոլիաներին գերշահույթ են ապահովում:

Մենք առաջարկում ենք.

- Ապահովել պետական մարմինների գործունեության հրապարակայնությունն ու թափանցիկությունը: Պատասխանատվությունը պետք է լինի հասցեական ու անձնավորված: Պետական կառավարման յուրաքանչյուր մարմնի համար պետք է սահմանվեն արդյունավետության գնահատման առանցքային ցուցանիշներ: Յուրաքանչյուր պաշտոնյա պետք է իմանա, թե որոնք են իր իրավունքներն ու պարտականությունները և ինչի համար է պատասխանատվություն կրելու:
- Ներդնել հանրային ծառայողների ու նրանց ընտանիքների արժանավայել կենսամակարդակ երաշխավորող վարձատրության համակարգ: Վարձատրությունը պետք է բավարար լինի, որպեսզի հանրային ծառայողը չփորձի եկամտի այլ աղբյուրներ փնտրել՝ հաճախ չարաշահելով իր պաշտոնական դիրքը: Ընդլայնել հանրային ծառայության սոցիալական փաթեթից օգտվողների շրջանակը՝ ներառելով առողջապահության, մշակույթի, կրթության և գիտության ոլորտի բոլոր աշխատակիցներին:
- Վարել արհեստավարժության և հանրային վստահության չափանիշներին համապատասխանող կադրային քաղաքականություն՝ շարունակաբար ներգրավելով երիտասարդներին պետության կառավարման գործում:
- Գործադրել շահերի բախման հնարավոր դեպքերը բացահայտելու ու կանխելու, անօրինական գործունեության համար անխուսափելիորեն պատասխանատվության ենթարկելու, բիզնեսն ու քաղաքական, վարչական իշխանությունը տարանջատելու ամբողջական համակարգ:
- Ընդդիմության և քաղաքացիական հասարակության ակտիվ մասնակցությամբ ստեղծել կոռուպցիայի դեմ պայքարի անկախ մարմին: Այն պետք է զբաղվի կոռուպցիայի աղաղակող և հանրության ուշադրության կենտրոնում գտնվող դեպքերով, այլ ոչ թե աշխատանքի պատրանք ստեղծի:

ԱՆԿԱԽ ԵՎ ՀԶՈՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ. ԱՐՑԱԽ, ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Մենք ձգտում ենք կերտել Ազատ, Անկախ ու Միացյալ Հայաստան: Մեր անկախ պետականության վերակերտումը սկսվեց արցախյան գոյամարտով, նրա գոյությունը պայմանավորված է արցախյան ճակատում մեր հաղթանակով: Հստակ պետք է գիտակցել, որ չկա առանձին Արցախի հարց: Արցախը հայկական հարցի, Հայ Դատի անբաժան մաս է: Այս հարցում մեր դիրքորոշումն անփոփոխ է՝ Արցախը պետք է վերամիավորվի Մայր Հայաստանի հետ: Արցախի անկախությունը մեզ համար մարտավարական նշանակություն ունեցող ժամանակավոր լուծում է:

Մենք ինքներս պետք է ապահովենք մեր երկրի անվտանգությունը՝ քաջ գիտակցելով, որ միայն պատերազմին պատրաստ լինելն է կանխում պատերազմի վտանգը: Այս հարցում միակողմանի զիջումների մասին հայտարարությունները միայն մոտեցնում և ավելի իրական են դարձնում պատերազմի սպառնալիքը:

Հայրենիքի պաշտպանությունը մեր բոլորիս սրբազան պարտականությունն է՝ անկախ մեր քաղաքական հայացքներից, սոցիալական կարգավիճակից, եկամտի մեծությունից: Բանակը պետք է գտնվի բոլորիս հոգածության կենտրոնում:

Հայաստանը պետք է վարի անկախ արտաքին քաղաքականություն՝ հիմնված բացառապես ազգային շահի և պետության հեռանկարային ռազմավարական զարգացման տեսլականի վրա: Մենք հայամետ և հայաստանակենտրոն ենք: Արտաքին քաղաքականության վեկտորն ընտրելիս պետք է առաջնորդվենք բացառապես մեր ազգային շահով: Մեր կազմած դաշինքները պետք է լինեն ոչ թե ընդդեմ որևէ կողմի, այլ բացառապես հանուն մեր նպատակների իրականացման:

Մենք առաջարկում ենք.

- Ամրապնդել Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության ռազմաքաղաքական համագործակցությունը, տնտեսական, ֆինանսական, սոցիալական, մշակութային, կրթական համարկումը: Հայաստանն Արցախի անվտանգության, ինքնիշխանության և տարածքային ամբողջականության երաշխավորն է: Անհրաժեշտ է Հայաստանի եւ Արցախի Հանրապետությունների միջեւ կնքել ռազմաքաղաքական համագործակցության պայմանագիր:
- Շարունակել աշխատանքները Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման ուղղությամբ:
- Ջանքեր գործադրել Արցախն իր ապագային վերաբերվող բանակցություններում որպես լիիրավ կողմ ներգրավելու համար:
- Ազգ-բանակ հայեցակարգի տրամաբանությամբ զարկ տալ հայրենական գիտական և տեխնոլոգիական մտքի վրա հիմնված ռազմաարդյունաբերական համալիրի ստեղծմանը: Հակառակորդն ունի նավթային դոլարներ, մենք

ունենք տաղանդավոր գիտնականներ, գյուտարարներ, ինժեներներ:

- Խրախուսել պրոֆեսիոնալ-կամավոր զինվորական ծառայության շրջանակի ընդլայնումը: Պարտադիր զինվորական ծառայության զորակոչված երիտասարդ զինվորի կողքին միշտ պետք է կանգնած լինի պրոֆեսիոնալ զինվորականը:

- Սպաների ու պայմանագրային զինծառայողների աշխատավարձերը համապատասխանեցնել արժանավայել ապրուստի պահանջներին: Սպան ու զինվորը, ովքեր ամեն օր իրենց կյանքը վտանգի են ենթարկում, չպետք է նյութական նեղություն զգան:

- ՀՀ արտաքին քաղաքականության օրակարգի անքակտելի մաս դարձնել Հայոց ցեղասպանության ճանաչման և փոխհատուցման հարցերը, բացառել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը թուլացնող որևէ գործողություն: Ձևավորել անհրաժեշտ դիմակայություն ընդդեմ թուրք-ադրբեջանական տանդեմի հակահայկական ծրագրերի:

- Վրաստանի հետ հարաբերությունները կառուցել բարեկամության ու ազգային շահերի փոխադարձ հարգանքի սկզբունքների վրա: Բարիդրացիական հարաբերություններն իրենց դրական ազդեցությունը կունենան ջավախահայության և ընդհանրապես վիրահայության իրավունքների լիարժեք իրականացման վրա:

- ՀՀ արտաքին քաղաքականության մեջ առաջնորդող սկզբունք համարել այն, որ Հայոց պետականությունը ոչ միայն Հայաստանի քաղաքացիների, այլև համայն հայության ազգային նպատակների իրականացման երաշխավորն է: Ըստ այդմ՝ ամեն ինչ անել սփյուռքահայությանը հայոց պետականության գործընթացում լիարժեք ներգրավելու համար: Գործադրել Հանրապետության և հայության տարբեր հատվածների առջև ծառացած մարտահրավերների հաղթահարման, համազգային ներուժի բացահայտման և օգտագործման ամբողջական ռազմավարություն:

Սիրելի՛ հայրենակից,

Հայ Յեղափոխական Դաշնակցությունը

հավատացած է, որ ազատ մարդ, անկախ և միասնական պետություն, համերաշխ հասարակություն ունենալու մեր բոլորի ցանկությունը միանգամայն իրագործելի է:

Մենք կարող ենք և պետք է զարգանանք առանց զիջելու: Սա պետք է դառնա համազգային պահանջ, գործողությունների հստակ ու վստահություն ներշնչող ծրագիր և նվիրված աշխատանք:

Վստահե՛ք Դաշնակցությանը, դեկտեմբերի 9-ին քվեարկե՛ք Դաշնակցության օգտին, և մենք արդար, զարգացող, ուժեղ Հայաստան կունենանք:

ՀԱՎԱՏԱՐՐՄ
ՀՈԳԻՆ ՈՒ
ՀԱՅՐԸ
3

Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ